ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"18" Մայիսի 2026թ. N 1209-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ (ՕԴԱՅԻՆ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ) ԵԼՔԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի ապրիլի 16-ի թիվ SA-8495 և 2026 թվականի ապրիլի 29-ի թիվ SA-8510 գրությունները և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալի 2026 թվականի մայիսի 11-ի միջնորդությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար պետական տուրքի վճարումից 2026 թվականի ապրիլի 23-ից 36 ամիս ժամկետով ազատել «Շիրակ Ավիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ Երևան-Կալինինգրադ-Երևան երթուղով:

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մամուլի քարտուղարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի տեղադրումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքում:
3. Օդային տրանսպորտի քաղաքականության և թռիչքների թույլտվությունների վարչության պետի պարտականությունները կատարողին՝ ապահովել սահմանված կարգով հրամանի օրինակի տրամադրումը «Ֆլայուան Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեին՝ ստորագրման օրվանից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում:

ՆԱԽԱՐԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

5/18/2026

X

ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

Signed by: SIMONYAN ARMEN 4003890647

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

ք. Երևան